«ԷՊԱՄ Սիսթեմզ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	6
ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	7
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	9
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ	10
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի
Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

N 032518

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Վ. Գևորգյան
Գլխավոր տնօրեն
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷՊԱՄ Սիսթեմզ» ՍՊԸ-ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԷՊԱՄ Սիսթեմզ» ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Այլ հանգամանք

«ԷՊԱՄ Սիսթեմզ» ՍՊԸ-ի 31 դեկտեմբեր 2023 թվականին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի գծով 28 հունիս 2024-ին վերջինս արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու,

այլ ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Լուիզա Հովհաննիսյան

Աուդիտոր

25 հունիս 2025

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

ՖԻՆԱՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	234,611	242,178
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	5	244,581	299,050
Ոչ նյութական ակտիվներ	6	121,156	170,796
Հետաձգված հարկային ակտիվներ	7	225,781	208,067
		826,129	920,091
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		493	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	2,324,835	3,213,151
Մնացորդներ բանկերում	9	4,616,357	2,349,076
		6,941,685	5,562,227
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**7,767,814**	**6,482,318**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ և պահուստներ			
Կանոնադրական կապիտալ	10	40,749	40,749
Լրացուցիչ կապիտալ		105,089	65,671
Կուտակված շահույթ		5,181,372	3,964,405
		5,327,210	4,070,825
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	11	58,900	77,063
		58,900	77,063
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	11	210,634	237,992
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	2,171,070	2,096,438
		2,381,704	2,334,430
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**7,767,814**	**6,482,318**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025 թվականի հունիսի 25-ին.

Բենյամին Գյուրջյան
Տնօրեն

Սոնա Ղահրամանյան
Ղեկավար, երկրի ֆինանսական վերահսկող

1-25 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	13	16,392,245	18,461,784
Այլ եկամուտ	14	1,094,784	339,835
		17,487,029	18,801,619
Հատուցում աշխատակիցներին	15	(15,265,539)	(16,242,584)
Մաշվածություն և ամորտիզացիա		(535,632)	(825,161)
Այլ ծախսեր	16	(235,033)	(317,953)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,450,825	1,415,921
Ֆինանսական եկամուտ		-	1,195
Ֆինանսական ծախսեր		(33,129)	(28,004)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	17	(61,203)	204,885
Շահույթ մինչև հարկերը		1,356,493	1,593,997
Շահութահարկի գծով ծախս	18	(139,527)	(283,229)
Տարվա շահույթ		1,216,966	1,310,768
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		1,216,966	1,310,768

1-25 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնա-դրական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	40,749	-	2,653,637	2,694,386
Բաժնետոմսերի վրա հիմնված փոխհատուցում		65,671		65,671
Տարվա շահույթ			1,310,768	1,310,768
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	65,671	1,310,768	1,376,439
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**40,749**	**65,671**	**3,964,405**	**4,070,825**
Բաժնետոմսերի վրա հիմնված փոխհատուցում		39,418		39,418
Տարվա շահույթ			1,216,966	1,216,966
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	39,418	1,216,966	1,256,384
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**40,749**	**105,089**	**5,181,371**	**5,327,209**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	1,216,966	1,310,768
Ճշգրտումներ՝		
Ոչ դրամական հատուցումներ աշխատակիցներին	39,418	65,671
Մաշվածություն և ամորտիզացիա	535,632	825,161
Ֆինանսական ծախս	33,129	28,004
Շահութահարկի գծով ծախս	139,527	283,229
Ֆինանսական եկամուտ	-	(1,195)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս, զուտ	61,203	(204,885)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	2,025,875	2,306,753
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	856,969	(1,019,528)
Պաշարներում փոփոխություն	(493)	32,205
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	309,626	3,105
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	3,191,977	1,322,535
Վճարված շահութահարկ	(157,241)	(609,060)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,034,736	713,475
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(429,182)	(313,254)
Հիմնական միջոցների օտարում	(2,115)	
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(431,297)	(313,254)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով վճարված պարտավորություններ	(305,125)	(279,023)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(305,125)	(279,023)
Բանկերում մնացորդների զուտ աճ	2,298,314	121,198
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(31,033)	187,156
Ստացված տոկոսային եկամուտ բանկային հաշիվների վրա	-	1,195
Բանկերում մնացորդներ տարվա սկզբում	2,349,076	2,039,527
Բանկերում մնացորդներ տարվա վերջում	4,616,357	2,349,076

1-25 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Ընդհանուր տեղեկություններ

«ԷՊԱՄ Սիսթեմզ» ՍՊԸ-ն (Ընկերություն) հիմնադրվել է 2014թ. մարտի 4-ին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերության գրանցման համարն է՝ 269.110.802615:

Ընկերությունը մասնագիտանում է տվյալների մշակման և համակարգչային ծրագրերի ներդրման ծառայություններում: Ընկերությունը Հայաստանում ամենամեծ SS ընկերություններից է: Ինժեներական առաջին կենտրոնը բացվել է Երևանում՝ 2014թ., իսկ երկրորդը՝ Գյումրիում:

Ընկերությունը վերահսկվում է «ԷՊԱՄ Սիսթեմզ (Կիպրոս) Լիմիթեդ» ընկերության կողմից, որին պատկանում է բաժնեմասերի 99.9%-ը: «ԷՊԱՄ Սիսթեմզ (Կիպրոս) Լիմիթեդ» ընկերությունը գործունեություն է ծավալում և գործում է Կիպրոսի օրենսդրության համաձայն, իսկ գործունեության հիմնական վայրն է՝ Կիպրոս, Նիկոսիա, Դիգենի Ակրիտա, 45 Պամպորիդիսի շենք 1070: «ԷՊԱՄ Սիսթեմզ (Կիպրոս) Լիմիթեդ» ընկերության գրանցման համարն է՝ HE 188906:

Ընկերության գլխավոր մայր ընկերությունն է «ԷՊԱՄ Սիսթեմզ Ինք.» ընկերությունը, որը գործունեություն է ծավալում Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավեր նահանգում, գրանցված է Նյութաուն (Փենսիլվանիա), Յունիվերսիթի Դրայվ 41 հասեում: «ԷՊԱՄ Սիսթեմզ Ինք.» ընկերությունը թվային հարթակի ինժեներական և համակարգչային ծրագրերի մշակման ծառայությունների համաշխարհային մատակարար է ամբողջ աշխարհում տեղակայված բազմաթիվ առաջատար կազմակերպություններում, հիմնականում Հյուսիսային Ամերիկայում, Եվրոպայում և Ասիայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համախմբված են «ԷՊԱՄ Սիսթեմզ Ինք.»-ի կողմից, որը ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում «EPAM» նշանի ներքո:

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 901 մարդ (2023թ.՝ 966 մարդ):

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Երևան Մովսես Խորենացու փող., 15 շենք, 3-րդ հարկ («Էլիտ Պլազա» բիզնես-կենտրոն):

Գործարար միջավայր

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում սրվել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ առումով:

2024թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը ընկերության գործունեության վրա:

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս

փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը ընկերության գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքեր

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով (բացառությամբ դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվության) և սկզբնական արժեքի մեթոդով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում ընկերությունը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- *«Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում»* ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- *«Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- *«Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում»* (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»* (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- *«Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ»* (ՀՀՄՍ 12 փոփոխություն)

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*, փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 *«Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»*

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման «նշանակալի» քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման «էական» քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել ընկերության կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել ընկերության կողմից: Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն

ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

«Փոխանակելիության բացակայություն» (ՀՀՄՍ 21 փոփոխություն)

«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)

ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա	-	1 տարի
Գրասենյակային գույք	-	8 տարի
Այլ	-	5 տարի:

3.2 Հասույթ

Ընկերության հասույթի հիմնական հոսքը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայությունների մատուցումն է, ներառյալ տեղեկատվական համակարգերի վերլուծությունը, ճարտարագիտությունը, ծրագրավորումը, տվյալների մշակումը և այլ ծառայություններ:

Հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

3.3 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 396.56 ՀՀ դրամ և 1 եվրոն՝ 413,89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.4 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 8-10 տարի համակարգչային ծրագրերի համար:

3.5 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

3.6 Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

3.7 Վարձակալված ակտիվներ

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը կնքում է վարձակալական պայմանագրեր հիմնականում գրասենյակային տարածքների համար: Բոլոր վարձակալության պայմանագրերը կնքվում են անհատական հիմունքներով:

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Որոշ վարձակալության պայմանագրեր պարունակում են ինչպես վարձակալության, այնպես էլ ոչ վարձակալության բաղադրիչներ: Այս ոչ վարձակալության բաղադրիչները, սովորաբար կապված են գրասենյակային միջոցների սպասարկման ծառայությունների հետ: Ընկերությունը որոշել է իր գրասենյակների վարձակալությունը չառանձնացնել վարձակալության և ոչ վարձակալության բաղադրիչների և փոխարենը հաշվառում է այդ պայմանագրերը որպես մեկ վարձակալության բաղադրիչ:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Ընկերությունը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Կարճաժամկետ վարձակալություններ

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.8 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

3.9 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Ընկերության՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները։

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում։ Ընկերության ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 20.1-ում։

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

Դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը, ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում։ Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը։

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»։ ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են առևտրային դեբիտորական պարտքերը, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն։

Պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Ընկերությունը դիտարկում է տեղեկատվության լայն զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա։

Ընկերությունը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը՝ օգտվելով ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ։ Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը։

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և վարձակալության գծով պարտավորությունները։ Ընկերության ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 20.1-ում։

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են վարձակալական վճարների ներկա արժեքով, որոնք դեռ չեն վճարվել մեկնարկի ամսաթվին, գեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրին ներհատուկ տոկոսադրույքով կամ, եթե այդ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Ընկերության հավելյալ վարկավորման լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով: Վարձակալական վճարները ներառում են ֆիքսված վճարները, վաղաժամ դադարեցման տուգանքները, եթե Ընկերությունը ողջամտորեն վստահ չէ, որ վաղաժամ չի դադարեցնի: Արտաքին գործոններից կախված փոփոխուն վճարները ծախսագրվում են կատարմանը զուգահեռ:

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարձակալության գծով պարտավորությունները վերաչափվում են այն ժամանակ, երբ ապագա վճարներում փոփոխություն է առաջանում: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների հաշվեկշռային արժեքում կատարվում է համապատասխան ճշգրտում կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվել է զրոյի:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.10 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

3.11 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնեմասերի նոմինալ արժեքը: Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Սեփականատերերի հետ բոլոր գործարքները առանձին-առանձին գրանցված են սեփական կապիտալում:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Լրացուցիչ կապիտալ

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ

Ընկերության Մայր ընկերությունը գործարկում է բաժնային գործիքներով մարվող՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարումների ծրագրեր, համաձայն որոնց Ընկերության աշխատակիցները ստանում են Մայր ընկերության բաժնային գործիքներ:

Բաժնետոմսերի դիմաց՝ աշխատակիցներից ստացված ծառայությունների իրական արժեքը ճանաչվում է որպես ծախս: Ծառայության ժամկետի ընթացքում՝ ծախսագրման ենթակա

ընդհանուր գումարը սահմանվում է բաժնային շնորհման տրամադրման օրվա դրությամբ իրական արժեքի հիման վրա:

Մայր ընկերության բաժնային գործիքների դիմաց Ընկերության աշխատակիցներին տրամադրված բաժնետոմսերը համարվում են կապիտալ ներդրում: Աշխատակիցներից ստացված ծառայության իրական արժեքը չափվում է տրամադրման օրվա իրական արժեքի հիման վրա և ճանաչվում է իրավունքի առաջացման ժամանակի ընթացքում՝ որպես լրացուցիչ կապիտալի աճ:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Համակարգ-չային տեխնիկա	Գրասենյա-կային գույք	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,763,556	111,342	19,695	1,894,593
Ավելացում	74,970	53,649	9,915	138,534
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,838,526	164,991	29,610	2,033,127
Ավելացում	32,401	5,180	7,646	45,227
Նվազեցում	(18,305)	(4,952)	(1,676)	(24,933)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,852,622	165,219	35,580	2,053,421
Կուտակված մաշվածություն				
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,299,072	47,374	5,713	1,352,159
Տարվա հաշվարկ	404,422	31,999	2,369	438,790
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,703,494	79,373	8,082	1,790,949
Տարվա հաշվարկ	29,308	17,509	4,421	51,238
Նվազեցում	(18,305)	(4,952)	(121)	(23,378)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,714,497	91,930	12,382	1,818,809
Հաշվեկշռային արժեք				
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	135,032	85,618	21,528	242,178
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	138,125	73,289	23,198	234,611

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 1,721,195 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31՝ 1,651,260 հազար դրամ)

5 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	Գրասենյակային տարածքներ
Սկզբնական արժեք	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	763,160
Ավելացում	412,124
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,175,284
Ավելացում	229,359
Օտարում	(3,947)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,400,696

Կուտակված մաշվածություն	
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	629,454
Տարվա հաշվարկ	246,780
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	876,234
Տարվա հաշվարկ	280,158
Օտարում	(277)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,156,115
Հաշվեկշռային արժեք	
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	299,050
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	244,581

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներառում են գրասենյակային տարածքների վարձակալությունը: Ընկերությունը գրասենյակներ է վարձակալում հիմնականում «Էլիտ Պլազա»-ում՝ ՀՀ, ք. Երևան, Մովսես Խորենացի 15 հասցեում և ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գարեգին Նժդեհ 8/2 հասցեներում: Ընկերությունը գրասենյակային տարածքները ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և մաշել է վարձակալության ժամկետի ընթացքում: Համապատասխան պարտավորությունը ներկայացվել է վարձակալության գծով պարտականություններում՝ 269,534 հազար դրամով (2023թ. դեկտեմբերի 31՝ 315,055 հազար դրամ):

6 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համա-կարգչային ծրագրեր	Լիցենզիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	165,825	5,084	170,909
Ավելացում	-	174,720	174,720
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,825	179,804	345,629
Ավելացում	-	154,596	154,596
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	165,825	334,400	500,225
Կուտակված ամորտիզացիա			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	34,387	855	35,242
Տարվա հաշվարկ	126,717	12,874	139,591
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	161,104	13,729	174,833
Տարվա հաշվարկ	601	203,636	204,236
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	161,705	217,365	379,069
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,721	166,075	170,796
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,120	117,035	121,156

7 Հետաձգված հարկային ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	208,067	192,331
Շահույթում կամ վնասում ճանաչված փոխհատուցում	17,714	15,736
Տարեվերջի մնացորդ	225,781	208,067

Հետաձգված հարկային ակտիվները հաշվարկվում են օգտագործման իրավունքի ձևով ակտիվի, վարձակալության գծով պարտավորության, ինչպես նաև առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի (կապակցված են աշխատակիցների հանդեպ հաշվեգրած պարտավորությունների հետ) հարկային և ֆինանսական հիմքերի ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,602,169	2,651,494
	1,602,169	2,651,494
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճարված հարկեր	721,666	516,537
Այլ	1,000	45,120
	722,666	561,657
	2,324,835	3,213,151

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Ծառայությունների մատուցումից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 62 օր (2023թ.՝ 52 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Առևտրային դեբիտորական պարտքերն արտահայտված են ԱՄՆ դոլարով (տե՛ս ծանոթ. 21) և հիմնականում գոյացել են կապակցված (ներխմբային) ընկերություններին վաճառքներից, հետևաբար ենթարկվում են նվազագույն պարտքային ռիսկի (տե՛ս ծանոթ. 21):

9 Մնացորդներ բանկերում

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային մնացորդներ՝ դրամով	680,039	7,009
Բանկային մնացորդներ՝ արտարժույթով	3,936,318	2,342,067
	4,616,357	2,349,076

10 Սեփական կապիտալ և պահուստներ

10.1 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 40,749 հազար դրամ է և բաղկացած է երկու բաժնեմասից: Բաժնեմասերի 99.9%-ը պատկանում է «ԷՊԱՄ Սիսթեմզ (Կիպրոս) Լիմիթեդ» ընկերությանը, որը գործունեություն է ծավալում և գործում է Կիպրոսի օրենսդրության համաձայն: Մնացյալ 0.1%-ը պատկանում է «ԷՊԱՄ Սիսթեմզ Ինք.» ընկերությունը, որը գործունեություն է ծավալում Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավար նահանգում:

10.2 Լրացուցիչ կապիտալ

Համաձայն Մայր ընկերության երկարաժամկետ խրախուսման ծրագրի՝ Ընկերության աշխատակիցներին տրամադրվում է Մայր ընկերության բաժնետոմս կամ դրամային վճար ստանալու իրավունք: Այդ իրավունքը, տրամադրումից հետո չորս տարիների ընթացքում, ըստ աշխատակիցներից ստացված ծառայության իրական արժեքով հավասարաչափ ճանաչվում է որպես լրացուցիչ կապիտալի աճ կամ պարտավորություն աշխատակիցների նկատմամբ:

Մայր ընկերության բաժնային գործիքներ տիրապետողներին չի տրամադրվում ձայնի կամ շահաբաժիններ ստանալու իրավունք:

11 Վարձակալության գծով պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեք		
Մինչև 1 տարի	210,634	237,992
1-ից 5 տարի	58,900	77,063
	269,534	315,055

Վարձակալության գծով պարտավորությունները զեղչելու նպատակով Ընկերության կողմից կիրառված փոխառության միջին կշռված տոկոսադրույքը կազմել է 11.2% (2023թ.՝ 8.7%):

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տոկոսային ծախսը, որը հաշվեգրվել է վարձակալության գծով պարտավորություններին, կազմել է 33,129 հազար դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի՝ 28,004 հազար դրամ) և ներառվել է ֆինանսական ծախսերում:

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	1,672,337	1,619,916
Առևտրային կրեդիտորական պարտքեր	195,960	175,028
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	302,773	301,494
	2,171,070	2,096,438

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

13 Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
ԷՊԱՄ Սիսթեմս Ինք.	10,544,316	11,057,902
ԷՊԱՄ Սիսթեմս Միացյալ Թագավորություն	1,462,295	2,088,950
ԷՊԱՄ Սիսթեմս Նիդերլանդներ	503,702	1,775,132
ԷՊԱՄ Սիսթեմս Գերմանիա	605,000	979,226
ԷՊԱՄ Սիսթեմս Բելգիա	204,380	756,512
ԷՊԱՄ Սիսթեմս Շվեյցարիա	782,424	489,304
ԷՊԱՄ Սիսթեմս ՍՊԸ Դուբայ մասնաճյուղ	-	300,279
ԷՊԱՄ Սիսթեմս Շվեդիա	257,152	227,821
ԷՊԱՄ Սիսթեմս Ֆրանսիա	49,641	183,616
Այլ	1,983,335	603,042
	16,392,245	18,461,784

14 Այլ եկամուտ

Ընկերությունը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության որոշումները՝ «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագրի» մասին, «Պետական աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին» և «Բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման» միջոցառման վերաբերյալ որոշումները, կնքել է պայմանագրեր ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ: Վերոնշյալ պայմանագրերի շրջանակներում 2024թ. ընթացքում ստացված պետական աջակցության գումարը կազմել է 1,058,276 հազար դրամ (2023թ.՝ 338,212 հազար դրամ):

15 Հատուցում աշխատակիցներին

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական աշխատավարձ	13,285,294	13,780,383
Ոչ դրամական հատուցումներ աշխատակիցներին	39,418	65,671
Հավելավճարներ և այլ հատուցումներ	1,793,057	2,222,423
Ապահովագրական ծախսեր	147,770	174,107
	15,265,539	16,242,584

16 Այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Միջոցառումներ և հյուրասիրություն	19,827	14,076
Գրասենյակային և կենցաղային ծախսեր	73,974	69,733
Աուդիտի և խորհրդատվական ծառայություններ	17,927	20,838
Չփոխհատուցվող հարկեր	23,516	17,946
Արտարժույթի փոխարկման ծախսեր	37,960	70,443
Լիցենզիաների թարմացման ծախսեր	-	-
Նվիրատվություն	777	45,968
Ապահովագրական ծախսեր	15,914	-
Այլ	45,138	78,949
	235,033	317,953

17 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	(31,348)	19,618
Մնացորդներ բանկերում	(31,033)	187,156
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1,178	(1,889)
	(61,203)	204,885

18 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	157,241	298,965
Հետաձգված հարկ	(17,714)	(15,736)
	139,527	283,229

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	1,356,493		1,593,997	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%)	244,169	18.0%	286,919	18.0%
Չնվազեցվող զուտ ծախսեր	(104,642)	-7.7%	(3,690)	-0.2%
Շահութահարկի գծով ծախս	139,527	10.3%	283,229	17.8%

19 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Կարևոր հաշվապահական գնահատումներ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալական պարտավորություններ

Օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալական պարտավորությունների արժեքը հաշվարկվում է վարձակալության ժամկետի ղեկավարության գնահատականների հիման վրա, ինչպես նաև լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի, որն օգտագործվում է վարձակալական վճարը զեղչելու համար: Վարձակալության ժամկետը համապատասխանում է յուրաքանչյուր պայմանագրի վարձակալության չեղյալ չհայտարարվող ժամկետին, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը ողջամտորեն վստահ է, որ կիրառելու է երկարաձգման հնարավորությունը: Վարձակալության ժամկետը գնահատելու ժամանակ Ընկերությունը հաշվի է առնում այն բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք Ընկերության համար վարձակալությունը երկարաձգման հնարավորությունը կիրառելու համար տնտեսական խթան են հանդիսանում, ինչպիսիք են վարձակալության պայմանագրերը լուծելու և կնքելու ծախսերը:

Այս գործոններում տեղի ունեցած փոփոխությունները կարող են ազդել գնահատված վարձակալության ժամկետի և օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալական պարտավորությունների գրանցված արժեքների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

20 Ֆինանսական գործիքներ

20.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,602,169	2,651,494
Մնացորդներ բանկերում	4,616,357	2,349,076
	6,218,526	5,000,570

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություն	269,534	315,055
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	195,960	175,028
	465,494	490,083

21 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Ընկերությունը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է գործառնական, գործունեությունից:

բ) Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության վաճառքներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հազար դրամ

	ԱՄՆ դոլլար	
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,601,809	2,651,494
Մնացորդներ բանկերում	3,936,318	2,342,030
	5,538,127	4,993,524
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	153	42,117
	5,537,974	4,951,407
Զուտ արդյունք		

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2023թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլլար	
	2024	2023
Շահույթ կամ վնաս	553,797	495,141

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը կախված է Ընկերության իրացումներից և փոփոխվում է դրանց ծավալից կախված: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Ընկերության՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ մնացորդները բանկերում և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,602,169	2,651,494
Մնացորդներ բանկերում	4,616,357	2,349,076
	6,218,526	5,000,570

դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Ընկերության ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Ընկերությունը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2024	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Պարտավորություն վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	*Անտոկոս*	11.22%	
Մինչև 6 ամիս		105,317	105,317
6 ամսից մինչև 1 տարի	195,960	105,317	301,277
1-5 տարի		58,900	58,900
	195,960	269,534	465,494

2023	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Պարտավորություն վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	*Անտոկոս*	11.22%	
Մինչև 6 ամիս	135,277	129,985	265,262
6 ամսից մինչև 1 տարի		129,266	129,266
1-5 տարի	-	95,555	95,555
	135,277	354,806	490,083

Ընկերությունն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական

միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Ընկերության դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 1-2 ամսվա ընթացքում:

22 Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Ընկերության կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է փոփոխել մասնակիցներին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը մասնակիցներին, թողարկել նոր բաժնեմասեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու համար:

23 Պայմանականություններ

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Ընկերության գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

24 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Ընկերության պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Վարձակալության գծով պարտավո-ր-ություններ
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	315,055
Դրամային հոսքերից	
Մարումներ	(305,125)
Ոչ դրամային հոսքերից	
Ավելացում	230,464
Տոկոսի հաշվեգրում	33,129
Օտարում	(3,989)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	269,534

Հազար դրամ	Վարձակալության գծով պարտավո-ր-ություններ
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	153,950
Դրամային հոսքերից	
Մարումներ	(279,023)
Ոչ դրամային հոսքերից	
Ավելացում	412,124
Տոկոսի հաշվեգրում	28,004
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	315,055

25 Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են մասնակիցներին, ընհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը, ինչպես նկարագրված է ստորև:

Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է «ԷՊԱՄ Սիսթեմզ (Կիպրոս) Լիմիթեդ» ընկերության կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնեմասերի 99.9%-ը: Ընկերության գլխավոր մայր ընկերությունն է «ԷՊԱՄ Սիսթեմզ Ինք.» ընկերությունը, որը գործունեություն է ծավալում Ամերիկայի Միացյալ Նահանգների Դելավեր նահանգում և ցուցակված է Նյու Յորքի ֆոնդային բորսայում «EPAM» նշանի ներքո:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են.

Հազար դրամ

Գործարքներ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մայր ընկերություն		
Ծառայությունների մատուցում	10,608,276	11,057,902
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ծառայությունների մատուցում	5,677,579	7,403,882
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	25,875	14,418

Հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
Մայր ընկերություն		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	882,045	1,384,022
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	719,754	1,267,472
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	677	83,369
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և պարգևատրումներ	5,047	2,289